


Մանուկներու Սուրբ Գիրքը կը ներկայացնէ

Եսայեայ ապագան կը տեսնէ



Written by: Edward Hughes

Illustrated by: Jonathan Hay

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

Adapted by: Mary-Anne S.

Story 27 of 60

www.M1914.org

Bible for Children, PO Box 3, Winnipeg, MB R3C 2G1 Canada

License: You have the right to copy or print this story, as long as you do not sell it.

Հայերէն

Armenian

Եսայեայ մարգարէ մըն էր: Անոր պարտականութիւնը
ժողովուրդին Աստուծոյ խօսքը փոխանցելն էր:

Յովնաթան

Աքբազ

Ամասիա



Ոգիա

1

ժողովուրդը միշտ չէր ուզեր Աստուծոյ խօսքին մտիկ
ընել, բայց Եսայեայ Աստուծոյ երբեք չէր նեղացներ:

Յովնաթան

Աքբազ


Ամասիա



Ոգիա


2

Եսայեայ քարոզեց չորս թագաւորներու թագաւորութեան շրջանին:



3

Ոգիա թագաւոր իշխեց ամբողջ Յուդայի վրայ Երուսաղէմ քաղաքէն: Սկիզբը Աստուած օրհնեց Ոգիան (որ նաեւ Ամասիա) կը կոչուէր, որովհետեւ ան ամէն ինչ ըրաւ, որ Տիրոջ աչքով ճիշդ էր: Սակայն Ոգիա հպարտ չարձաւ եւ դադրեցաւ Աստուծոյ հնազանդիլ: Ան բորոտ դարձաւ եւ մինչեւ մահ առանձին ապրեցաւ:



Ոգիա թագաւորեց 60 տարիներ: Երբ մահացաւ իր տղան Յովնաթան թագաւորեց տասներօր տարի: Աստուած օրհնեց Յովնաթամը, որովհետեւ ան կը լսէր ինչ որ Աստուած կ'ըսէր Իսրայէլի մարգարէին միջոցով:




Յովնաթամ թագաւորին տղան Աքազն էր: Աքազ քսան տարեկան էր երբ գահ բարձրացաւ, ան տասնվեց տարիներ թագաւորեց Երուսաղէմի մէջ: Աքազ երբեք կարեւորութիւն չէր տար Աստուծոյ:



Ան կուռքեր եւ սիսալ ու սուտ աստուածներ կը պաշտէր եւ շատ մը Աստուծոյ մարդոց ստիպեց իր ճամբան գալէն: Թէեւ Եսայեայ զգուշացուց զինք, Աքազ Աստուծոյ զգուշացումներուն երբեք կարեւորութիւն չէր տար: Ան 35 տարեկան հասակին մահացաւ:



Աստուած օրհնեց յաջորդ թագաւորը, Եզեկիան, որովհետեւ ան վերցուց բոլոր կուռքերն ու սիսալ աստուածները եւ իրաւ Աստուծոյ աղօթեց: Երբ բանակ մը յարձակեցաւ Յուդայի վրայ Եզեկիա գիտցաւ, որ իր բանակը տկար է յաղթելու: Ան Եսայեայէն ինչդրեց, որ աղօթէ, որպէսզի Աստուած օգնէ:




Եսայեայ իր լուրը դրկեց թագաւորին. "Ա՛յս է ինչ որ Տէրը կ'ընէ: Մի՛ վախնար թշնամիէդ... Ես գիտք պարտութեան պիտի մատնեմ...": Շուտով Աստուած թշնամիին բանակը հեռացնել տուաւ առանց որեւէ կռիւի Եգիպտային դէմ:




9

Թէեւ ժողովուրդը իրեն չափ չէին մտածեր Աստուծոյ մասին, Եսայեայ շատ կը մտածեր Աստուծոյ մասին:



10

Օր մը, ան տեսիլք մը տեսաւ, որ արթուն վիճակի մէջ երազ մըն էր: Տեսիլքին մէջ, Եսայեայ տեսաւ, թէ ինչ հրաշալի էւ սուրբ է Տէրը:



11

"Ո՞վ կ'ուզես ես դրկեմ", տեսիլքին մէջ հարցուց Աստուած. "Ես հոս եմ, ինծի դրկէ", պատասխանեց Եսայեայ: Ան կ'ուզէր կատարել ան ինչ որ Աստուած կը պահանջէր իրմէ եւ կ'երթար, ուր որ Աստուած կը դրէր զինք:



12

Թերեւս Եսայեայ կը կարծէր, թէ Աստուած կ'ուզէր զինք դրկել հեռու տեղեր, ուր տակաւին չէին իմացած Աստուծոյ մասին: Բայց ոչ, Աստուած այդպէս չըրաւ:




13

Աստուած Եսայեային ըսաւ, որ խօսի իր ժողովուրդին հետ իր երկրին մէջ: Ան պետք էր ըսէր, որ Աստուած բարկացած է իրենց գործած մեղքերէն:




14

Ուրիշ բաներ ալ կային, որ Եսայեայ պիտի ըսեր ժողովուրդին, հիանալի անձի մը համար, ...




15

... որ պիտի ըլլար հզօր փրկիչ եւ գար ու ազատեր զիրենք իրենց մեղքերէն եւ իրենց բոլոր թշնամիներէն, որոնք ժողովուրդը այս անձը կոչեց "օծեալ":




16

Թէւ կ'ակնկալէին, որ Աստուած դրկէ օծեալը, սակայն շատեր կ'ապրէին այդպէս ինչպէս, որ ան երբեք պիտի չի գար:



17

Այս բոլորը, որ Եսայեայ ըսաւ Մեսիային մասին գրուած են իր գիրքին մէջ: Թէւ ան գրած էր այս բոլորը հարիւրաւոր տարիներ առաջ, որ պատահին, այն ինչ որ Եսայեայ ըսաւ Մեսիային մասին պիտի իրականանայ:



18

Եսայեայ ըսաւ, որ Աստուած ինքը պիտի տայ այդ նշանը:

Ան ըսաւ. "Ահաւասիկ, կոյս մը պիտի յղանայ տղայ մը, որուն Էմանուէլ պիտի կոչէ":




19

Ժողովուրդը գիտցաւ, որ Եսայեայ կը խօսեր Աստուծոյ մասին,

որովհետեւ կոյս աղջիկ մը չէր կրնար զաւակ ունենալ: Նաեւ Էմանուէլ կը նշանակէ Աստուած մեր հետ:



20



"Մեզի պիտի ծնի մանուկ մը, մեզի պիտի տրուի տղայ զաւակ մը, եւ կառավարութիւնը Անոր ուսերուն վրայ պիտի բեռցուի: Եւ Անոր անունը պիտի կոչուի հիանալի, խրախուսիչ, հզօր Աստուած, Յաւերժական Հայր, Խաղաղութեան Իշխան: Եսայեայ այդքան վստահ էր Աստուծոյ խոստումէն, որ պիտի իրականանայ, ան խօսեցաւ այդպէս ինչպէս կարծէք արդէն պատահած էր: Այս կը կոչուի մարգարեութիւն":

21

Եսայեայ ըսաւ, թէ Մեսիայ հզօր պիտի ըլլայ եւ հզօր գործեր պիտի կատարէ: Աստուած նաեւ ըսաւ Եսայեային, որ ժողովուրդին ըսէ, թէ Մեսիա պիտի տառապի եւ մահուան ենթարկուի:



22

Եսայեայ կը զարմանար, թէ ինչպէս Մեսիա այդքան հզօր եւ զօրաւոր կ'ըլլայ եւ նոյն ատեն այդքան տկար եւ վիրաւոր: Բայց Եսայեայ Աստուծոյ հետ չվիճեցաւ: Ան միայն կրկնեց, ինչ որ Աստուած ըսաւ իրեն որ ըսէ: Աստուած տեսական կիրականացնէ իր մարգարեութիւնը:



23

Մեսիա կու գար, ոչ հրեայ ժողովուրդին միայն այլ ամբողջ մարդկութեան: Աստուած ըսաւ Եսայեային, որ Մեսիայ պիտի ըլլայ: "Լոյս մը բոլոր հեթանոսներուն": Հեթանոսները այն բոլոր ժողովուրդներն էին աշխարհին, որ հրեայ չէին: Աստուած կը սիրէ բոլորը եւ Իր Մեսիային պիտի գայ, որ օրհնէ բոլորը եւ փրկութիւն բերէ աշխարհին:



24

Եսայեայ ապագան կը տեսնէ

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Եսայեայ 1, 6, 7, 9, 53

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Սաղմոս 119:130



Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք Ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ Իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի Խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան Իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինծի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետո՞ղ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինծի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16